ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄԻՆ

Հայաստանի Հանրապետություն, 0002 Երեւան, Ղազար Փարպեցի, 9բ
հեռ.՝ + 374 10 53 76 62, 53 35 41, 53 00 67, հեռապատճեն՝ + 374 10 53 56 61
Էլ.փոստ՝ meo@ypc.am

# ԶԼՄ-ՆԵՐԻ ԷԹԻԿԱՅԻ ԴԻՏՈՐԴ ՄԱՐՄՆԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԸ

**Դիտորդ մարմնի կազմը՝**

Նարինե ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշան ԴՈՅԴՈՅԱՆ
Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Արա ՂԱԶԱՐՅԱՆ
Գեղամ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Աշոտ ՄԵԼԻՔՅԱՆ
Մեսրոպ ՄՈՎՍԵՍՅԱՆ
Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Արա ՇԻՐԻՆՅԱՆ
Նունե ՍԱՐԳՍՅԱՆ
Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ
Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Կարինե ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

## Ընդդեմ 168.am կայքի՝ Վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանի դիմումի վերաբերյալ

Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել Վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանն՝ ընդդեմ 168.am կայքում 2019թ. հոկտեմբերի 26-ին հրապարակված «Ի՞նչ պատասխանի Կարապետյանը. չէ՞ որ իր ղեկավարն ու թավշյա հեղափոխականները եղան ողջերին մեռելների շարքին դասելու նախադեպ ստեղծողները» հոդվածի (հեղինակ՝ Աղավնի Սուքիասյան)։ Ըստ բողոքի՝ հրապարակման մեջ խախտված է լրագրողական էթիկան, մասնավորապես, վարչապետի մամուլի խոսնակին տրվել է ոչ կոռեկտ հարց։

## Ա. ՓԱՍՏԵՐ

1. 168.am կայքը 2019թ. հոկտեմբերի 26-ին հրապարակել է «Ի՞նչ պատասխանի Կարապետյանը. չէ՞ որ իր ղեկավարն ու թավշյա հեղափոխականները եղան ողջերին մեռելների շարքին դասելու նախադեպ ստեղծողները» հոդվածը (հեղինակ՝ Աղավնի Սուքիասյան)։

2. 2019թ. նոյեմբերի 4-ին Հայաստանի ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնին է դիմել Վարչապետի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանն՝ ընդդեմ 168.am կայքում 2019թ. հոկտեմբերի 26-ին հրապարակված

«Ի՞նչ պատասխանի Կարապետյանը. չէ՞ որ իր ղեկավարն ու թավշյա հեղափոխականները եղան ողջերին մեռելների շարքին դասելու նախադեպ ստեղծողները» հոդվածի։

3. 2019թ. նոյեմբերի 29-ին Դիտորդ մարմինը դիմել է Արմեն Խաչատրյանին՝ ճշտելու՝ արդյո՞ք հոդվածում ճշգրտորեն և առանց աղավաղման են ներկայացված վարչապետի մամուլի խոսնակ Վլադիմիր Կարապետյանի պատասխանները լրագրողի հարցերին։ Ա. Խաչատրյանը հաստատել է, որ դրանք աղավաղված չեն։

4. Քանի որ 168.am-ը ԶԼՄ-ների ինքնակարգավորման նախաձեռնության անդամներից է և ստորագրել է Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիրը, Դիտորդ մարմինը, առաջնորդվելով իր աշխատակարգով, 2019թ. դեկտեմբերի 2-ին տեղեկացրել է 168.am կայքի գլխավոր խմբագիր Սաթիկ Սեյրանյանին, որ առաջիկայում քննելու է բողոքը և նշել. «Քննության անաչառությունն ապահովելու համար Դիտորդ մարմինը կցանկանար ստանալ նաև ձեր պարզաբանումները»։

Վերջինս հավաստիացրել է, որ կայքի լրագրողը բարեխիղճ է աշխատել, և ինքը ոչինչ չունի ավելացնելու հրապարակմանը, ինչպես նաև՝ որ  հրաժարվում է մասնակցել այդ հարցով ԴՄ նիստին։

## Բ. ԷԹԻԿԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ

**Հայաստանի լրատվամիջոցների և լրագրողների էթիկական սկզբունքների կանոնագիր**

**1.  Ճշգրտություն և անկողմնակալություն**

1.3. հստակ սահմանազատել փաստերի և տեղեկությունների շարադրանքը՝ կարծիքներից, վերլուծություններից և մեկնաբանություններից,

1.4. վերլուծություններ և մեկնաբանություններ կատարելիս հիմնվել ստույգ փաստերի և հավաստի տեղեկությունների վրա։

## Գ. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը՝

**ընդունում է, որ**

բողոքարկվող հոդվածում բարձրացված խնդիրը արժանի է

հանրային քննարկման, և տվյալ թեմային անդրադարձը կարող էր հնչել որպես հասարակությանը հասցեագրված բարոյական կոչ՝ մերժելի համարել կենդանի մարդկանց մահվան ատրիբուտներով ծաղրելը,

**պնդում է, որ**

ա) նյութի մատուցմամբ և առաջին հերթին՝ վերը նշված վերնագրի ընտրությամբ հեղինակը մեծ մասամբ շեղվել է վերոնշյալ խնդրից և առաջնային պլան մղել քաղաքական հակադիր շրջանակների միջև նեղ շահերի շուրջ հակասությունները,

բ) հանրությանը կարևոր տեղեկություն հաղորդելու նպատակը, որը կարող էր արդարացնել սադրանք պարունակող հարց ուղղելը, հիմնականում չի իրականացվել և հանդուրժողականության, պարկեշտության կոչ անելու փոխարեն հեղինակը առաջին պլան է բերել մեկ քաղաքական ուժի նկատմամբ իր վերաբերմունքը,

գ) շարադրանքի հիմք են դարձել ոչ թե փաստերը կամ կարծիքները, այլ բամբասանքը, չճշտված լուրերը կամ անեկդոտը,

**արձանագրում է, որ**

Դիտորդ մարմնի անդամների միջև առկա է տարաձայնություն՝ հարցադրման հասցեատիրոջ ճիշտ և արդարացված ընտրության հարցում (մասնավորապես կարծիքներ են հնչել, որ ելնելով թեմայի առանձնահատկությունից՝ հարցը պետք է ուղղվեր անձամբ Նիկոլ Փաշինյանին, կամ որ ընդհանրապես հիմնավորված չէր այդ հասցեով խնդրին անդրադառնալը),

**շեշտում է, որ**

հեղինակի կողմից արված հետևությունները չեն բխում զրուցակցի պատասխաններից,

**համարում է, որ**

ոչ միայն հեղինակի հարցն էր սադրիչ բնույթի, ինչը չի բացառվում լրագրողական էթիկայի սկզբունքներով, այլ նաև՝ նյութը հրապարակելու բուն նպատակը քաղաքական մանիպուլյացիան էր: Այսպիսով, 168.am կայքի 2019թ. հոկտեմբերի 26-ի «Ի՞նչ պատասխանի Կարապետյանը. չէ՞ որ իր ղեկավարն ու թավշյա հեղափոխականները եղան ողջերին մեռելների շարքին դասելու նախադեպ ստեղծողները» վերնագրով հոդվածի բովանդակությունը պարունակում է էթիկայի խախտման ակնհայտ հատկանիշներ:

*Ընդունվել է ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի*
*2020թ. հունվարի 17-ի նիստում,*
*ԴՄ հետևյալ կազմով՝*

**Մեսրոպ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**, մամուլի փորձագետ

**Գնել ՆԱԼԲԱՆԴՅԱՆ**, «Արմենիա» հեռուստաընկերության «Ժամը» լրատվական հաղորդման գլխավոր խմբագիր, «Newmag» ամսագրի գլխավոր խմբագիր

**Բորիս ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ**, Երևանի մամուլի ակումբի նախագահ

**Արա ՇԻՐԻՆՅԱՆ,** Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ

**Նունե ՍԱՐԳՍՅԱՆ**, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի գործադիր տնօրեն

**Անժելա ՍՏԵՓԱՆՅԱՆ**, Արմավիրի «Ալտ» հեռուստաընկերության խմբագիր

**Գեղամ ՎԱՐԴԱՆՅԱՆ**, Media.am-ի պրոդյուսեր

*ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինը ձեւավորվել է ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների կողմից, որոնք այս պահին թվով 47-ն են: ԴՄ-ն իր եզրակացություններում ղեկավարվում է Հայաստանի լրատվամիջոցների եւ լրագրողների էթիկական սկզբունքների Կանոնագրով, որն ընդունվել է 2007 թվականի մարտի 10-ին, վերախմբագրվել՝ ինքնակարգավորման նախաձեռնությանը միացած լրատվամիջոցների 2015 թվականի մայիսի 16-ի ընդհանուր ժողովում:*